Պարույր Սևակ

Գարնան վտանգավոր հոտը

-Հարկավոր չէ՞,- ասում եմ ես ինքըս ինձ,
Ասում եմ ես մտքիս մեջ
Ու մեկ-մեկ էլ՝ գժի նման՝ բարձրաձայն:
Հարկավոր չէ՞ այս նոր սերը ո՞չ մեկիս՝
Ո՞չ քեզ, ո՞չ ինձ:
Ո՞չ մեկիս...
Բայց ակամա դերասանից (հասկանո՞ւմ ես, ակամա՞),
Հա՞, ակամա դերասանից ո՞վ է դժբախտ առավել...
Եվ կույր ձեռքս
Կույրին հատուկ խարխափումով ու դողով
Հեռվից-հեռու ձեռքդ, մեջքդ կամ աչքերդ է որոնում
Եվ մոլեգին շոշափումով կարծես նրանց վրայից
Ջնջում է իմ «հարկավոր չէ»-ն տառ առ տառ...
Վա՜յ քեզ, թշվա՞ռ երջանկություն,
Տանջանքի հո՞ղը գլխիդ:
Մի՞թե նրա չափ էլ չկաս, որ չտանջես ինքըդ քեզ,
Որ մոռանաս «միթե»-ները,
«Չէ որ»-ները քո երկսայր
Եվ անձնատուր լինես ինքըդ քո ընթանցքին
Գարնան պես:
Իսկ գարո՞ւնը...

Արձակվում է ճամփաների պաղն արդեն:
Կպչուն ցեխն է հովեր առնում իշխելու:
Եվ ձների մարմնի վրա վտակները հալոցքի
Իրենց հունով բաց են անում նորանոր
Երակներ ու զարկերակներ սև ու տաք.
Սկսվում է մի նոր գարուն անհատա՞կ ու անհատա՛կ՝
Երազի մեջ մեզ պատահող անկումի՛ պես անհատակ...
Ինչքա՞ն կուզես «հարկավոր չէ՛» գոռգոռա.
Ինչքա՞ն կուզե թող ուղեղդ երկմտանքի սև ջերմից
Ձյան պես հալվի,
Դառնա պաղած թանապուր.
Ինչքա՞ն կուզես խաչ դիր վրադ
Քո սեփական արյունով,-
Միևնո՞ւյնն է.
«Հարկավոր չէ՛»-ն իր իսկ կամքին հակառակ,
Ինքն իրենից թաքուն անգամ՝
Ի վերջո
Վերափոխվում ու դառնում է «ի՞նչ ուզում է թող լինի»,
Որովհետև... մարդը մա՞րդ է, ո՛չ թե քայլող գաղափար...
Որովհետև... «չէ որ»-ները նո՛ւյնպես քնել են ուզում...
Որովհետև... ինքդ գարնան վտանգավոր հոտ ունես...
Որովհետև... ինքս էլ գարնան վտանգավոր այդ հոտից
Միշտ զգում եմ գլխապտույտ,
Որ տևում է ամիսներ...
Որովհետև... պարտվե՞լ, այո՛,
Ումի՞ց կուզես դու պարտվի՛ր,
Սակայն ո՛չ թե ինքդ քեզնից.
Ինքդ քեզնից պարտվելով՝
Դու դառնում ես փսոր ծամոն
Կամ ինքնաթափ պատի ծեփ

Եվ ոչ նույնիսկ մի մեքենա,
Գեթ մեքենա՛ խելացի,
Որ կուզեի՛ իրոք դառնալ,
Բայց ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,
Եթե բնավ չի՛ ստացվում, ի՞նչ անեմ:
Էլ ի՞նչ մնաց, որ ի՛նչ անեմ, սիրելի՛ս:
Մնաց զոռա՛լ, թե երկուսիս՝ ինձ ու քեզ,
«Հարկավոր չէ՛»-ն հարկավոր չէ՛ իսկապես.
Մե՛նք ենք իրար հարկավոր...

17.III.1964թ.
Դիլիջան